## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
## ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Գեղադիր համայնք, ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գեղադիր, 4
փ, 4 շ., Հեռ. (094) 248414 , geghadir.kotayq@mta.gov.am

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

N 163
*26 հունիս 2020թ.*

Հարգելի պարոն մարզպետ,

<<Տեղական ինքնակառավարման մասին>>օրենքի 33-րդ հոդվածի4-րդ մասի 9-րդ կետի համաձայն Ձեզ է ուղարկվում Գեղադիր համայնքի ղեկավարի 42-Ա, 43-Ա,44-Ա որոշումները ։

Առդիր 3 թերթ:

Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Թ. Մուրդյան*
*Հեռ.077161037*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, geghadir.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 հունիսի 2020թվականի N 42-Ա

## ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի,Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կարգի,2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-51-րդ կետերի պահանջներով՝ որոշում եմ.

1.Անտոն Երջանիկի Մկրտչյանին սեփականության իրավունքով պատկանող Գեղադիր գյուղի 07-022-135-048 կադաստրային համարի գյուղատնտեսական նշանակության 01544 հա հողամասից առանձնացված 0.02241հա 07-022-0135-0053 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը փոխել բնակավայրերի հողերի կատեգորիա, ըստ գործառնական նշանակության՝ խառը կառուցապատման:

2.Անտոն Երջանիկի Մկրտչյանին սեփականության իրավունքով պատկանող Գեղադիր գյուղի 07-022-0135-0053 կադաստրային ծածկագրով 0.02241հա մակերեսով բնակավայրի նշանակության հողամասին տրամադրել Կոտայքի մարզ, Գեղադիր 2-րդ թաղամաս,12 հասցեն:

3.Անտոն Մկրտչյանը պարտավոր է Գեղադիր համայնքի բյուջեի 900105208178 հաշվին վճարելու հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերությունը 181 521(հարյուր ութսուն մեկ հազար հինգ հարյուր քսանմեկ )ՀՀ դրամ:

4.Նշված հողի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի տարեկան,ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռում:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Անտոն Մկրտչյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

2020 թ. հունիսի 23
գ.Գեղադիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 248414, goghadir.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

23 հունիսի 2020թվականի N 43-Ա

### ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ2020ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>>օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով Գեղադիր համայնքի ավագանու 2019թվականի դեկտեմբերի 26-ի N45-Ն որոշման 9-րդ կետը ՝որոշում եմ.

1.Գեղադիր համայնքի 2020թվականի բյուջեի ծախսային մասով կատարել հետևյալ վերաբաշխումը.
1)02բաժնի 02խմբի 01 դասի 4239 հոդվածից 50 000/հիսուն հազար/դրամ վերաբաշխել 01բաժնի01 խմբի 01 դասի 4112 հոդվածին.
2)02բաժնի 05 խմբի 01 դասի 4239 հոդվածից 50 000/հիսուն հազար/դրամ վերաբաշխել 01 բաժնի 01խմբի 01 դասի 4112 հոդվածին:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

2020 թ. հունիսի 23
գ.Գեղադիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ԳԵՂԱԴԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գեղադիր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գեղադիր, (094) 246414, geghadir.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 հունիսի 2020թվականի N 44-Ա

## ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի,Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի, 2005թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-51-րդ կետերի պահանջներով՝որոշում եմ.

1.Գագիկ Հրաչյայի Մկրտչյանին սեփականության իրավունքով պատկանող Գեղադիր գյուղի 07-022-0135-0047 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության 0.1629 հա հողամասից առանձնացված 0.03515 հա 07-022-0135-0056 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության վարելահողի նպատակային նշանակությունը փոխել բնակավայրերի հողերի կատեգորիա,ըստ գործառնական նշանակության՝ խառը կառուցապատման:

2.Գագիկ Հրաչյայի Մկրտչյանին սեփականության իրավունքով պատկանող Գեղադիր գյուղի 07-022-0135-0056 կադաստրային ծածկագրով բնակավայրի հողամասին տրամադրել Կոտայքի մարզ,Գեղադիր 2-րդ թաղամաս 14 հասցեն:

3.Գագիկ Մկրտչյանը պարտավոր է Գեղադիր համայնքի բյուջեի 900105208178 հաշվին վճարելու հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերությունը 284 715/երկու հարյուր ութսունչորս հազար յոթ հարյուր տասնհինգ/ ՀՀ դրամ:

4.Նշված հողի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի տարեկան,ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռում:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գագիկ Մկրտչյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ

2020թ. հունիսի 26
գ.Գեղադիր